

ԵՊՀ ՈՒԳԸ 4-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Նվիրված Երևանի պետական համալսարանի
Ուսանողական գիտական ընկերության հիմնադրման 70-ամյակին
Երևանի պետական համալսարան | 2017 թ. հոկտեմբերի 2-6

Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) Ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ) կազմակերպում է 4-րդ միջազգային գիտաժողովը՝ նվիրված ՈՒԳԸ հիմնադրման 70-ամյակին: Գիտաժողովը ուսանողներին, ասպիրանտներին և երիտասարդ գիտնականներին հնարավորություն է ընձեռում ակադեմիական լսարանին ներկայացնելու իրենց գիտական հետազոտության արդյունքները, կատարելագործելու գիտական աշխատանք կատարելու հմտությունները, ինչպես նաև կապեր հաստատելու Հայաստանի և արտերկրի՝ տարբեր ոլորտներում մասնագիտացած երիտասարդ հետազոտողների հետ:

ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտաժողովին ներկայացվող զեկուցումները ներառվելու են հետևյալ մասնագիտական բաժանմունքներում.

ԲՆԱԿԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՃՇԳՐԻՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհագրություն	Ֆիզիկա
Երկրաբանություն	Ռադիոֆիզիկա
Քիմիա	Մաթեմատիկա և մեխանիկա
Կենսաբանություն	Կիրառական մաթեմատիկա և համակարգչային գիտություններ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմագիտություն	Իրավագիտություն
Ցեղասպանագիտություն	Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ
Հնագիտություն, ազգագրություն և մշակութաբանություն	Սոցիոլոգիա
Արվեստաբանություն	Տնտեսագիտություն
Արևելագիտություն	Կառավարում
Աստվածաբանություն	Փիլիսոփայություն
Լեզվաբանություն	Հոգեբանություն
Հայ և արտասահմանյան գրականություն	Ժուռնալիստիկա
	Սերվիս



ԵՊՀ

ՈՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գիտական նստաշրջանին կարող են մասնակցել ուսանողներ, ասպիրանտներ, հայցորդներ և մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականներ բոլոր երկրների բուհերից ու այլ գիտահետազոտական հաստատություններից: 35 տարեկանից բարձր մասնագետները կարող են նստաշրջանին մասնակցել որպես հրավիրյալ զեկուցողներ՝ ներկայացնելով իրենց գիտական հետազոտության արդյունքները կամ խոսել իրենց մասնագիտության արդի հիմնախնդիրների շուրջ:

ԻՆՉՊԵՄ ԴԻՄԵԼ

Գիտական նստաշրջանին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել **առցանց հայտադիմումը**, իսկ **զեկուցման սեղմագիրը** (մինչև 300 բառ)՝ ուղարկել ՈՒԳԸ էլ. փոստի հասցեին՝ sss@ysu.am: Մեկ մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ զեկուցում: Մեկից ավելի հայտ ներկայացնելու պարագայում զեկուցման կթույլատրվի ներկայացված վերջին հայտը, եթե հայտատուն չի տեղեկացնում այլ նախընտրության մասին:

Ստացված հայտերն անցնելու են մասնագիտական գրախոսության փուլ, և միայն դրական արդյունքի պարագայում կհաստատվի հայտատուի մասնակցությունը գիտական նստաշրջանին:

Գիտական նստաշրջանի բոլոր զեկուցողներին տրվելու են մասնակցության հավաստագրեր:

ԿԱՐԵՎՈՐ ԺԱՄԿԵՏՆԵՐ

2017 թ. հունիսի 30

2017 թ. հուլիսի 30

2017 թ. օգոստոսի 5

2017 թ. օգոստոսի 15

Հայտերի ներկայացման առաջին վերջնաժամկետ*

Մասնակցության վերաբերյալ պատասխան

Հայտերի ներկայացման երկրորդ վերջնաժամկետ

Մասնակցության վերաբերյալ պատասխան

* Հայտն առաջին վերջնաժամկետում ներկայացնելու դեպքում հայտադրուներն ավելի շարժամանակ կունենան որևէ խնդրի պարագայում տեղեկացվելու և անհրաժեշտ շտկումներ կատարելու համար:



ԵՊՀ

ուսանողական գիտական ընկերություն

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ

Գիտական նստաշրջանին զեկուցված նյութերը գրախոսության փուլը հաղթահարելու պարագայում տպագրվելու են «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» գիտական պարբերականում, որը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ճանաչված է որպես ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակություն: Պարբերականի էլեկտրոնային համարները տեղադրված են ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայքում՝ www.ssspub.ysu.am:

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Հասցե՝ [Երևանի պետական համալսարան,](#)
[Ուսանողական գիտական ընկերություն](#)
Կենտրոնական մասնաշենք, 6-րդ հարկ
Ալեք Մանուկյան 1, Երևան, 0025, Հայաստան

Հեռախոսահամար՝ +37460710194

Վեբ-կայք՝ www.sss.ysu.am

Ֆեյսբուքյան էջ՝ [ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն](#)
- [YSU Student Scientific Society](#)



ԵՊՀ

ուսանողական գիտական ընկերություն